**Հավելված N 1**
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2023 թվականի նոյեմբերի 10-ի N 376-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարը հայտարարում է **կրկնակի** մրցույթ «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**Թումանյան համայնքի «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.**

**1.**Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, մինչև ***2023 թվականի հոկտեմբերի 31-ը դիմած*** քաղաքացիները:
**2.Կրկնակի** մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում:
**3.***Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*
**4.Կրկնակի մրցույթը** կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան,քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1), ***2023 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը՝ 10:00-ին:***